ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ 14ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արարատի մարզի Դիտակ համայնքի ավագանու հերթական 14նիստի օրակարգը:

1.2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԶԳԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍՐԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31-Ն

2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2019թվականի հունվարի 1-ից Դիտակ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 180000/մեկ հարյուր ութանասուն հազար/ՀՀ դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Դիտակ համայնքի ավագանու 2017թվականի 11.12 թիվ 28-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՋԳԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍՐԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32-Ն

2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.2019թվականի հունվարի 1-ից հաստատել Դիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Դիտակ համայնքի ավագանու 2017թվականի11.12.թիվ 28-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՋԳԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍՐԱՊՈՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզի Դիտակ համայնքի ավագանու

<<17>> <<դեկտեմբեր>> 2018թվականի թիվ 32-Ն որոշման

ԴԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը-6

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/	ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ /ՀՀ ԴՐԱՄ/
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար		180000	2.160000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
2	Աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1/	1	110000	1.320000
3	Առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-1/	1	90000	1.080000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
4	Օպերատոր	1	90000	1.080000
5	Հավաքարար	1	90000	1.080000
6	Պահակ	1	90000	1.080000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33-Ն

2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ մասի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14րդ հոդվածների պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Դիտակ համայնքում 2019թվականի համար սահմանել
   1/ տեղական տուրքերի դրույքաչափերը համաձայն հավելվածի 1-ի
   2/տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի 2-ի
2. Ուժը կորցրած ճանաչել Դիտակ համայնքի ավագանու 2017թվականի թիվ 27-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՋԳԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍՐԱՊՈՅԱՆ

Հավելված 1
Դիտակ համայնքի ավագանու
17 դեկտեմբերի 2018թ թիվ33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը

1).Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000դրամ.

5) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներ և/կամ/ծխախոտի
Արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 1500դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝15000դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000դրամ.

6/իրավաբանական անձանձ և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության

Օրենքով սահմանված ՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝

Յուրաքանչյուր օրվա համար՝175դրամ մեկ քառակուսի մետրի համար.

.

7/ համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.

8) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ 190դրամ

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում 75դրամ.

9) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000դրամ.

1-ին կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակիցի կիրառմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 2

Դիտակ համայնքի ավագանու

17դեկտեմբեր 2018թ թիվ 33-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000դրամ

2) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար3000դրամ

3)տեղական կառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու և վարձակալական հիմունքներով տրամադրելու դեպքում անհրաժեշտ Չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոփհատուցման վճար սահմանել 500դրամ:

4)համայնքի աղբահանության վճար սահմանել մեկ շնչի հաշվով ամսեկան 100դրամ:

4.1համայնքում իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել հետևյալ սակագներով

ա/Առևտրի /այդ թվում շուկաների/ հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողներ-35դրամ/1քառ.մ/

բ/Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ-15դրամ/1քառ.մ/

գ/Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ-6դրամ/1քառ.մ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիտակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիտակ, (091)475038, ditak.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի

Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Արարատի մարզի Դիտակ համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը

1. 01.01.01.51 (կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման
4112 հոդվաշից պակասեցնել 90000 դրամ(իննսուն հազար)
4267 հոդվածից պակասեցնել 40000 դրամ(քառասուն հազար)
4111 հոդվածին ավելացնել 130000 դրամ(հարյուր երեսուն հազար)
2.08.02.04.51(մշակույթային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման
4269 հոդվածից պակասեցնել 60000 դրամ(վաթսուն հազար)
4239 հոդվածին ավելացնել 60000 դրամ(վաթսուն հազար)

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՌԳԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՎՍԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ՍՐԱՊՈՅԱՆ